

գիւղ արուարձանը: Հայրը Բ. Դրան պաշտօն-
եայ Խաչիկ Օտեանն էր:

Մանկութեանը դպրոց չէ դաջած: Իր ա-
ռաջին դասերը Լեւոն Հաճեանէն է առած տու-
նը: Տպաւորութիւն մը չունի իր առաջին ման-
կութենէն: Գիտէ միայն, որ շատ գեղեցիկ է
եղած պղտիկութեանը:

Առաջին ճամբորդութիւնը ըրած է Տօրեղ-
բօրը Գրիգոր Օտեանի հետ Ֆրանսա եւ Իտա-
լիա, 1878-ին: Յետոյ է, որ դաջած է Ռուսա-
նիոյ ձուրձօվա քաղաքը, ուր իր հայրը կար-
գըռած էր օսմանեան հիւպատոս:

Հոնկէ կը սկսի, ինչպէս ինքը կ'ըսէր,
իր... դրական գործունէութիւնը, լուծած ըլ-
լալով, 1882-ին թէ 1883-ին, — լաւ չլիշեց
ճիշդ տարին, — հանելուկ մը Պոլսոյ Բուրաս-
տան Մանկանց թերթին մէջ:

Պոլիս դարձին, 1883-1885, կը յաճարէ
Պէրպէրեան վարժարանը: Իր դպրոցական
կեանքին մէջէն իսկ կը սկսի իր լրագրողի
կեանքը: Պէրպէրեանի մէջ է, որ կը հրատա-
րակէ իր առաջին... թերթը, վառարան անու-
նով ու ձեռքով դրուած: Ռէթէոս Պէրպէրեան
կը խափանէ անոր թերթը, ու Օտեան կը ըս-
տիպուի նոր մը հանել, այս անգամ Անհաշտ
անունով: Այսքան մը միայն յիշեց Օտեան իր
դպրոցական կեանքէն, իրր յիշատակութեան
արժանի:

Կը շարունակէր միշտ մասնաւոր դասեր
առնել Գրիգոր Մարգարեանէ, Տիւպուսէ եւ
Տիւրքէէ:

Իր մօրեղբոր Գէորդ Ասլանի հետ 1888-ին
կը ճամբորդէ Անտիօք:

Վերադարձին՝ պաշտօնեայ կը կարգուի
Հանրային Պարտուց Վարչութեան մէջ, 1893-
94 թուականներուն: Այդ շրջանին է, որ կը
սկսի իր գրական բուն գործունէութիւնը:
Կ'աշխատակցի Մասիսին, Մանգումէի Էփէսա-
րին եւ Արեւելին:

Պաշտօնեայ լուծը անտանելի կուգայ
իրեն: Ու կը թօթուէ զայն: Հանրային Պար-
տուց Վարչութեան մէջ իր պաշտօնը ձգելով
1894-ին կը մտնէ Պոլսոյ Հայրենիքի խմբագր-
ութեան մէջ, պաշտօն, զոր կը վարէ մինչեւ
1896, օգոստ. 24:

Նոյն օրն է, որ, — Պանքայի Դէպքին օ-
րը, — կը հեռանայ Պոլսէն, կապ ունեցած ըլ-

լալով, ինչպէս Հայրենիքի միւս մարդիկը,
Հնչակեան կուսակցութեան հետ, առանց եր-
բեք ինք անգամակցած ըլլալու այդ կուսակ-
ցութեան:

Պոլսէն չունչը Աթէնք կ'առնէ, ուր 6-7 ա-
միս կը մնայ: Հոն կ'աշխատակցի Միլլար-իւն ա-
նուն թերթին, որ կը բաժնուէր ճրի, հրատա-
րակիչն էր Ռէթէոս անուն մէկը:

Եգիպտոսը կ'ըլլայ իր յաջորդ ապաստա-
նը: Ու երկու տարի, 1897-1898, զանձապահի
եւ հաշուակալի պաշտօն կը վարէ Պօղոս Նու-
պարի Շարապպասի ազարակին մէջ:

Հոն ալ ախարիկ չընէր, ինչպէս ինքը կ'ը-
սէր: Կանցնի Փարիզ 1899-ին: Նախ՝ կ'աշխա-
տակցի Գուրտոն Լուսինեանի Փրանսահայ
բաղրիքին: Յետոյ միջնորդ կ'ըլլայ հնարժէք
առարկաներու, եւ հուսկ ապա պաշտօնեայ
արչաւի ձիւրու հայթայթիչի մը մօտ:

Վիեննա է իր յաջորդ կայքը: Կ'երթայ
գործակցելու Անտրօնիք Եուանէսքուի, որ բա-
նարան մը կը պատրաստէր ապացուցանելու
համար, թէ բոլոր լեզուները հայերէնէն սե-
րած են: Օտեան չի կրնար հանդուրժել այդ
հիւանդ մարդուն, որ անըզար կը պահանջէր
հայերէն արմատներ ճարել՝ ուրկէ ծագած ըլ-
լային օտար բաներ:

Պահ մը Լոնտոն՝ աշխատակից «Նոր Կեան-
ք»ի, յետոյ դարձեալ Փարիզ է, դրադած «Ա-
զատ Խօսք»ը խմբագրելով:

Շունչը Եգիպտոս կ'առնէ դարձեալ 1902ին:
Քանի մը տարի պաշտօնեայ կը մնայ ձուլիչ
Անիկոնոս ազայի մօտ, որ զինքը կը ձեռնա-
դրէ... Բազոսի ինկարկու:

Հնդկաստան կ'անցնի 1904-ին զբաղելով
ադամանդի վաճառականութեամբ: Հնդկաս-
տան կը գործէր իր Հրանդ եղբայրը:

Եգիպտոս է կրկին 1905-ին, իրբեւ ձուլա-
բանի պաշտօնեայ: Եգիպտոս ալ կը մնայ մին-
չեւ 1908, հրատարակելով «Ազատ Բեմ», «Ա-
զատ Խօսք», «Արեւ», «Կրակ», «Օրէնք» եւ-
այլն:

Օսմ. Մահմանդութեան յետոյ Պոլիս է:
Յաջորդաբար կ'աշխատակցի «Արեւելք»ի, «Ա-
զատամարտ»ի, «Հայրենիք»ի, «Բիւզանդիոն»ի
եւ «Ժամանակ»ի, ու ինք իսկ կը հրատարակէ
կարգ մը Երզնիսթերթեր:

Աքսոր կը զրկուի 1915-ին, ու կը տեսնէ